

Հաստատված է
.....
>>>>>>>>>> Խորհրդի
"-ի նիստում (արձ. թիվ)
Խորհրդի նախագահ՝
.....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊՈԱԿ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկատոր)

1. Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	042101.00.6 Իրավագիտություն
2. Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
3. Շնորհիվող որակավորումը	Իրավագիտության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240 (երկու հարյուր քառասուն)
5. Բարձրագույն ուսումնական հաստատություն	ՀՀ ոստիկանության կրթահամալիր
6. Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ	ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետ
7. Կրթական ծրագրի ուսուցման լեզու	-
8. Կրթական ծրագրի ուսուցման ձևը	Հայերեն: Հնարավոր են որոշ դասընթացների դասավանդում անգլերենով և ռուսերենով
9. Կրթական ծրագիրը հավատարմագրված/լիցենզավորված է՝	Առկա (անվճար, վճարովի) Լիցենզավորված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից Լիցենզիա N 0078, տրված 05 փետրվարի 2018թ.

10. Ընդհանուր դրույթներ
10.1. Կրթական ծրագրի հիմնավորումը. «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ստեղծումը հիմնավորվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի առաքելությանը համապատասխան իրավագիտության ոլորտում ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ այնպիսի շրջանավարտների պատրաստման անհրաժեշտությամբ, ովքեր կհամապատասխանեն աշխատաշուկայի, ինչպես նաև՝ Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակում սահմանված պահանջներին և կկարողանան պատասխանատու գործունեություն իրականացնել իրավաբանի մասնագիտության տարբեր ոլորտներում: 10.2. Կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերը ➤ ՀՀ օրենքը «Կրթության մասին» /14.04.1999թ./ ➤ ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» /14.12 2004 թ./ ➤ ՀՀ Կառավարության N 332-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» /31.03.2011թ./ ➤ ՀՀ կառավարության N 2307-Ն որոշումը «Բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» /22.12.2005թ./ ➤ ՀՀ ԿԳ նախարարի N 1282-Ն հրամանը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը հաստատելու մասին» /07.11.2017թ./ ➤ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն /09.11.2006թ./ ➤ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում դիմորդների ընտրության և ընդունելության կարգ

/հաստատված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թ. թիվ 2 նիստում/:

«Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրին համապատասխան՝ կրթական գործընթացի բովանդակությունը և կազմակերպումը սույն մասնագրի իրականացման ընթացքում կարգավորվում է բակալավրատի ուսումնական պլանով, դասընթացների առարկայական ծրագրերով, սովորողների ուսուցման և դաստիարակության որակը ապահովող նյութերով, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների ծրագրերով, ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով, ինչպես նաև՝ համապատասխան կրթական տեխնոլոգիաների իրականացումը ապահովող մեթոդական նյութերով:

10.3. Կրթական ծրագրի նպատակը

Կրթական ծրագիրը նպատակ ունի պատրաստել այնպիսի կադրեր, ովքեր՝

- 1) կկարողանան առավելագույնս նպաստել Հայաստանի Հանրապետության իրավական և հասարակական անվտանգության ամրապնդմանը,
- 2) կկարողանան օրենքի սահմաններում ապահովել մարդու անվտանգությունը, սեփականության բոլոր ձևերի, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանությունը,
- 3) կկարողանան նախականիսել, կանիսել և խափանել հանցագործություններն ու վարչական իրավախախտումները,
- 4) կկարողանան հայտնաբերել և բացահայտել հանցագործությունները,
- 5) կկարողանան մատուցել որակյալ իրավաբանական օգնություն և հանրային որակյալ ծառայություններ:

10.4. Կրթական ծրագրի մշակման սկզբունքները

Մասնագիտության կրթական ծրագիրը կազմելու հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

➤ **Համակարգվածություն.** ենթադրում է իրավագիտության ճյուղերը և ինստիտուտները ուսումնասիրել ոչ միայն առանձին-առանձին, այլ համակարգված՝ մի ամբողջական ծրագրի սահմաններում: Այսպիսի մոտեցման դեպքում մեկ ընդհանուր համակարգում միավորվում են տարբեր դասընթացներ և բացահայտվում է վերջիններիս փոխապայմանավորվածությունը:

➤ **Կրթության ակադեմիականություն.** ներառում է իրավագիտության ուսուցման ժամանակային և տարածական գործոնները:

➤ **Գիտականություն.** Իրավագիտության ուսուցումը կազմակերպվում է իրավահամեմատական, վերլուծական, կառուցվածքային և այլ մեթոդների կիրառմամբ և համադրությամբ:

➤ **Ազգային և համամարդկային արժեքների զուգակցում.** Մասնագիտական կրթական ծրագրի առանցքային նպատակներից է՝ պատրաստել շրջանավարտներ, ովքեր կկարողանան ապրել և աշխատել բազմամշակույթ, գլոբալ միջավայրում, զուգակցել ազգային և համամարդկային արժեքները:

➤ **Կրթության շարունակականություն.** Մասնագիտական կրթական ծրագիրը կազմված է ուսումնառության և դասավանդման մեթոդական այնպիսի ռազմավարության հիման վրա, որը կոչված է ապահովել կրթության շարունակականությունը:

➤ **Հաջորդականություն** Մասնագիտական կրթական ծրագրում նախատեսված ուսումնառության և դասավանդման ռազմավարությունը կոչված է ապահովել նաև դրանում ընդգրկված դասընթացների հաջորդականությունը և տրամաբանական կապը:

10.5. Ուսուցման ձևը /առկա, հեռակա/ և ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը, դիմորդներին ներկայացվող պահանջները

Կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի է, ուսուցման ձևը՝ առկա (անվճար, վճարովի):

Կրթական ծրագրի աշխատածավալը 240 կրեդիտ է:

Կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին

մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ Կառավարության համապատասխան որոշման, ՀՀ ոստիկանության պետի 2012 թ. մայիսի 18-ի՝ «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում դիմորդների ընդունելության կարգը սահմանելու մասին» թիվ 8-Ն հրամանի և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թ. թիվ 2 նիստում հաստատված «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում դիմորդների ընտրության և ընդունելության կարգ»-ի պահանջների:

11. Ծրագրի ուսումնական պլանը /հավելված 1/:

Անվճար ուսուցում

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար, բնագիտական և սոցիալ-տնտեսագիտական (61 կրեդիտ աշխատածավալով), մանկավարժական և հոգեբանական (12 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր և հատուկ մասնագիտական (165 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (32 կրեդիտ աշխատածավալով):

➤ ընդհանուր հումանիտար, բնագիտական և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Պարտադիր դասընթացներ (61 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ /մոդուլ/, որոնք նպատակաուղղված են բարձրագույն կրթության ընդհանուր տեսական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

➤ Մանկավարժական և հոգեբանական կրթամաս (12 կրեդիտ)

Պարտադիր դասընթացներ (12 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ / մոդուլ/, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մանկավարժական և հոգեբանական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

➤ Ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամաս (165 կրեդիտ)

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

Պարտադիր դասընթացներ (165 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ / մոդուլ/:

➤ Կրթական այլ մոդուլներ (կրեդիտ)

Կուրսային աշխատանք (6 կրեդիտ)

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 3 կուրսային աշխատանքի կատարում:

Ուսումնական պրակտիկա (4 կրեդիտ)

Նախատեսվում է 3 ուսումնական պրակտիկա (2-ը 1-ական կրեդիտ, 1-ը 2 կրեդիտ աշխատածավալով):

Ուսումնական պրակտիկայի նպատակն է սովորողներին ծանոթացնել ոստիկանության տարածքային բաժնի հերթապահ մասի, պարեկապահակետային, համայնքային ոստիկանության, թույլտվության և լիցենզավորման, անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի, պետական պահպանության ծառայությունների գործունեության խնդիրներին և գործառույթներին: Պրակտիկայի ընթացքում սովորողները ձեռք են բերում գործնական հմտություններ՝ ոստիկանության ստորաբաժանումների կողմից անցկացվող միջոցառումներին և այդ միջոցառումների փաստաթղթավորմանը մասնակցելով: Պրակտիկան անցկացվում է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի՝ Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններ գործուղված վաշտերում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների համայնքային ոստիկանության բաժանմունքներում:

Նախաավարտական պրակտիկա (15 կրեդիտ)

Նախաավարտական պրակտիկայի նպատակներն են՝

➤ սովորողների տեսական գիտելիքների ամրապնդումը,

- ծառայողական պարտականություններն ինքնուրույն կատարելու համար անհրաժեշտ գործնական հմտությունների և ունակությունների ձեռքբերումը,
- օպերատիվ-ծառայողական փաստաթղթերի կազմման, հաշվառման, և օգտագործման հմտությունների ձևավորումը,
- հետաքննչական աշխատանքում անհրաժեշտ փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրումը:

Պրակտիկան անցկացվում է ՀՀ ոստիկանության տարածքային բաժինների հետաքննության և օպերատիվ ստորաբաժանումներում:

Վարժախաղեր (1 կրեդիտ)

Պրակտիկայի ավարտից հետո սովորողների մոտ ձեռք բերված հմտությունների և կարողությունների ստուգման նպատակով կազմակերպվում են իրավիճակային ստուգիչ միջոցառումներ, որի գլխավոր նպատակը տեսական և գործնական ուսուցման հավասար հարաբերակցության ապահովումն է և սովորողը պետք է ներկայացնի պրակտիկայի ընթացքում ստացած հմտությունները:

Ամփոփիչ ավարտական որակավորման քննություն (6 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

Վճարովի ուսուցում.

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (56 կրեդիտ աշխատածավալով), մաթեմատիկական և բնագիտական (9 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր և հատուկ մասնագիտական (153 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (22 կրեդիտ աշխատածավալով):

➤ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Պարտադիր դասընթացներ (56 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ /մոդուլ/, որոնք նպատակաուղղված են բարձրագույն կրթության ընդհանուր տեսական և Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ սովորողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ/ մոդուլ/:

➤ Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս (11 կրեդիտ)

Պարտադիր դասընթացներ (9 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ / մոդուլ/, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ սովորողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ/ մոդուլ/:

➤ Ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամաս (153 կրեդիտ)

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

Պարտադիր դասընթացներ (153 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ / մոդուլ/:

➤ Կրթական այլ մոդուլներ (22 կրեդիտ)

Կուրսային աշխատանք (4 կրեդիտ)

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում:

Նախաավարտական պրակտիկա (10 կրեդիտ)

Նախաավարտական պրակտիկայի նպատակը սովորողների մոտ հետաքննության կատարման համար անհրաժեշտ գործնական ունակությունների ձևավորումն է: Պրակտիկան անցկացվում է ՀՀ

նստիկանության տարածքային բաժինների հետաքննության ստորաբաժանումներում:

Ամփոփիչ ավարտական որակավորման քննություն (8 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

12. Կրթական ծրագրի ելքային արդյունքները (կոմպետենցիաներ):	
Անվճար ուսուցում	
ՄԳԻ. Մասնագիտական գիտելիք և իմացություն	
ՄԿԾ-ի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակներում սովորողը կրթական ծրագրի հաջող ավարտին պետք է գիտենա՝	
ՄԳԻ 1.	պետության և իրավունքի ծագման, զարգացման հիմնական օրինաչափությունները, պետության գործառույթները, ձևը և քաղաքական համակարգում պետության տեղը
ՄԳԻ 2	իրավունքի հասկացությունը, էությունը և սկզբունքները, իրավունքի նորմերը և աղբյուրները, գործառույթները, համակարգը, իրավագիտակցությունը, իրավահարաբերությունների կառուցվածքը, իրավական վարքագծի տեսակները
ՄԳԻ 3.	իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, տեսակները, գործառույթները
ՄԳԻ 4.	պատմության, հոգեբանության, տրամաբանության, քաղաքագիտության, մասնագիտական էթիկայի և տնտեսագիտության սկզբունքները և դրույթները
ՄԳԻ 5.	նյութական և դատավարական իրավունքի հիմնական նորմերը և ինստիտուտները
ՄԳԻ 6.	ՀՀ իրավապահ մարմինների համակարգը և գործառույթները
ՄԳԻ 7.	նստիկանության վարչական գործունեության հասկացությունը, հիմնական ուղղությունները և խնդիրները
ՄԳԻ 8.	օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, իրականացման հիմնական ձևերը
ՄԳԻ 9.	հանցագործությունների քննության մեթոդիկայի և մարտավարության դրույթները
ՄԳԻ 10.	հանցավորության կանխարգելման էությունը և ուղղությունները
ՄԳԻ 11.	նստիկանության գործունեության մեջ մարդու իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերը
ՄԳԻ 12.	գաղտնիության ռեժիմի հասկացությունը, իրավական հիմքերը և պահպանման կարգը
ՄԳԻ 13.	առաջին բուժօգնության հիմունքները, Հայաստանի Հանրապետությանը սպառնացող արտակարգ իրավիճակները, քաղաքացիական պաշտպանության կառուցվածքը, սկզբունքներն ու ձևերը, ֆիզիկական պատրաստականության որակների առանձնահատկությունները, զենքի և ռազմամթերքի հետ վարվելու անվտանգության կանոնները, նյութական մասը

ՄԳԻ 14.	հայոց լեզվի նորմատիվ օրինաչափությունները, ռուսաց և օտար (անգլերեն) լեզուների ծրագրերով նախատեսված բառերը և արտահայտությունները, ինչպես նաև՝ քերականական և լեքսիկական նյութերը, հաղորդակցման նշանակությունը, դերը խնդիրները, տեսակները, խոչընդոտներ առաջացնող պատճառները
ԳՄՀ. Գործնական մասնագիտական հմտություններ	
ՄԿԾ-ի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակներում սովորողը կրթական ծրագրի հաջող ավարտին պետք է տիրապետի՝	
ԳՄՀ 1.	համակարգչի հետ աշխատելու և էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հմտություններին
ԳՄՀ 2.	նորմատիվ իրավական ակտերի մշակման հմտություններին՝ իր մասնագիտական գործունեության ոլորտում
ԳՄՀ 3.	Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու և օգտագործելու հմտություններին
ԳՄՀ 4.	հաղորդակցման հմտություններին
ԳՄՀ 5.	հայերեն պաշտոնական գրագրությանը
ԳՄՀ 6.	կրիմինալիստիկական և հատուկ տեխնիկայի օգտագործման հմտություններին՝ իր մասնագիտական գործունեության ոլորտում
ԸՓԿ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
ՄԿԾ-ի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակներում սովորողը կրթական ծրագրի հաջող ավարտին պետք է կարողանա՝	
ԸՓԿ 1.	կատարել ընդհանրացումներ և ճիշտ վերլուծություններ
ԸՓԿ 2.	տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը
ԸՓԿ 3.	հաղորդակցվել մասնագիտական օտար լեզվով
ԸՓԿ 4.	ճիշտ մեկնաբանել իրավական նորմերը
ԸՓԿ 5.	կիրառել նորմատիվ իրավական ակտերը
ԸՓԿ 6.	Իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստերին և արարքներին, տալ գաղտնի տեղեկագրերին համապատասխան դրոշմագրեր, ստեղծի, մեքենագրի, բազմացնի, առաքի և ստանա գաղտնի փաստաթղթեր
ԸՓԿ 7.	հայտնաբերել, կանխարգելել, բացահայտել հանցագործությունները և այլ իրավախախտումները, վերացնել դրանց կատարմանը նպաստող պատճառները
ԸՓԿ 8.	տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և խորհրդատվություն իրավաբանական գործունեության կոնկրետ ոլորտներում
ԸՓԿ 9.	համագործակցել գործընկերների հետ, աշխատել թիմում, վերլուծել իրավապահ մարմինների իրավասությունը, պարզաբանել նրանց տեղը և դերը իրավապահ համակարգում
ԸՓԿ 10.	ցուցաբերել առաջին բուժօգնություն
ԸՓԿ 11.	տարբերակել Հայոց պատմության առավել կարևոր իրադարձությունները, դեպքերն ու փաստերը, պարզաբանել իրավահարաբերությունների տնտեսական

	դրդապատճառները, բնութագրել քաղաքական ինստիտուտների էությունն ու գործառույթները
--	--

Վճարովի ուսուցում	
ՄԳԻ. Մասնագիտական գիտելիք և իմացություն	
ՄԿԾ-ի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակներում սովորողը կրթական ծրագրի հաջող ավարտին պետք է գիտենա՝	
ՄԳԻ 1.	պետության և իրավունքի ծագման, զարգացման հիմնական օրինաչափությունները, պետության գործառույթները, ձևը և քաղաքական համակարգում պետության տեղը
ՄԳԻ 2.	իրավունքի հասկացությունը, էությունը և սկզբունքները, իրավունքի նորմերը և աղբյուրները, գործառույթները, համակարգը, իրավագիտակցությունը, իրավահարաբերությունների կառուցվածքը, իրավական վարքագծի տեսակները
ՄԳԻ 3.	իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, տեսակները, գործառույթները
ՄԳԻ 4.	պատմության, հոգեբանության, տրամաբանության, քաղաքագիտության և տնտեսագիտության սկզբունքները և դրույթները
ՄԳԻ 5.	նյութական և դատավարական իրավունքի հիմնական նորմերը և ինստիտուտները
ՄԳԻ 6.	ՀՀ իրավապահ մարմինների համակարգը և գործառույթները
ՄԳԻ 7.	օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքները
ՄԳԻ 8.	հանցագործությունների քննության մեթոդիկայի և մարտավարության դրույթները
ՄԳԻ 9.	հանցավորության կանխարգելման էությունը և ուղղությունները
ՄԳԻ 10.	մարդու իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերը
ՄԳԻ 11.	արտակարգ իրավիճակներում քաղապաշտպանության և առաջին բուժօգնության հիմունքները, ֆիզիկական դաստիարակության դերը և նշանակությունը,
ՄԳԻ 12.	հայոց լեզվի նորմատիվ օրինաչափությունները, ռուսաց և օտար (անգլերեն) լեզուների ծրագրերով նախատեսված բառերը և արտահայտությունները, ինչպես նաև՝ քերականական և լեքսիկական նյութերը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր հասկացությունները, ծրագրային ապահովման տեսակները
ԳՄՀ. Գործնական մասնագիտական հմտություններ	
ՄԿԾ-ի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակներում սովորողը կրթական ծրագրի հաջող ավարտին պետք է տիրապետի՝	
ԳՄՀ 1.	համակարգչի հետ աշխատելու և էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հմտություններին
ԳՄՀ 2.	նորմատիվ իրավական ակտերի մշակման հմտություններին՝ իր մասնագիտական գործունեության ոլորտում
ԳՄՀ 3.	հաղորդակցման հմտություններին

ԳՄՀ 4.	հայերեն պաշտոնական գրագրությանը
ԳՄՀ 5.	կրիմինալիստիկական տեխնիկայի օգտագործման հմտություններին՝ իր մասնագիտական գործունեության ոլորտում
ԸՓԿ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
ՄԿԾ-ի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակներում սովորողը կրթական ծրագրի հաջող ավարտին պետք է կարողանա՝	
ԸՓԿ 1.	կատարել ընդհանրացումներ և ճիշտ վերլուծություններ
ԸՓԿ 2.	տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը
ԸՓԿ 3.	հաղորդակցվել մասնագիտական օտար լեզվով
ԸՓԿ 4.	ճիշտ մեկնաբանել իրավական նորմերը
ԸՓԿ 5.	կիրառել նորմատիվ իրավական ակտերը
ԸՓԿ 6.	իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստերին և արարքներին
ԸՓԿ 7.	տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և խորհրդատվություն իրավաբանական գործունեության կոնկրետ ոլորտներում
ԸՓԿ 8.	համագործակցել գործընկերների հետ, աշխատել թիմում, վերլուծել իրավապահ մարմինների իրավասությունը, պարզաբանել նրանց տեղը և դերը իրավապահ համակարգում
ԸՓԿ 9.	իրականացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված գործողությունները, ճիշտ օգտվել անհատական պաշտպանության միջոցներից, կատարել հատուկ և ընդհանուր Ֆիզիկական վարժություններ, ճիշտ ձևակերպել դատաբժշկական և դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելիս առաջադրվող հարցերը
ԸՓԿ 10.	տարբերակել Հայոց պատմության առավել կարևոր իրադարձությունները, դեպքերն ու փաստերը, պարզաբանել իրավահարաբերությունների տնտեսական դրդապատճառները, բնութագրել քաղաքական ինստիտուտների էությունն ու գործառույթները

13. Գնահատման մեթոդներ:
Կրթական ծրագրի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով: Գնահատվում են սովորողի՝ ա. գիտելիքը, բ. ունակություններն ու կարողությունները, գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճն օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը: Դասընթացների գնահատման մեթոդներից են՝ 1. Տեսական դասընթացների պարագայում՝ գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),

2. Գործնական դասընթացների պարագայում՝ գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ, Հետազոտական աշխատանքների (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական թեզ) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:
Գնահատումն իրականացվում է՝ համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:
Գնահատման մանրամասները տես՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում:
<http://edupolice.am/>

14. Ուսուցման և դասավանդման մոտեցումները /հավելված 2/:

Դասախոսություններն իրականացվում են խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան ներառում են ձևավորված ենթախմբեր: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով սովորողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև՝ անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:
Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատական/ պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:
Դասախոսություններ – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,
Սեմինարներ– խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,
Գործնական պարապմունքներ -փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն,
Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ – Անհատական հետազոտության և զարգացման աջակցում,
Անհատական խորհրդատվություն – Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

15. Ուսումնական պլանի քարտեզը:

Տե՛ս կցված հավելված 3:

16. Կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը

Շրջանավարտի մասնագիտական գործունեության ոլորտը.

«Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի գործունեության ոլորտներն են՝ իրավական նորմերի մշակում և իրացում, իրավակարգի և օրինականության պահպանում, իրավական ուսուցում և դաստիարակություն:

Բակալավրի մասնագիտական գործունեության ոլորտը ընդգրկում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպատիրական տարբեր ձև ունեցող կազմակերպությունները, նոտարիատը, փաստաբանական գրասենյակները, դատախազության մարմինները, քրեակատարողական մարմինները, մաքսային մարմինները, սեփական-

նության տարբեր ձև ունեցող կազմակերպություններում, բանկերում և այլ կազմակերպություններում իրավաբանի աշխատանքը:

Շրջանավարտի մասնագիտական գործունեության օբյեկտները.

Բակլավվրի մասնագիտական գործունեության օբյեկտն են՝ իրավակարգի և օրինականության պահպանման, իրավական նորմերի իրացման ոլորտի հասարակական հարաբերությունները:

Շրջանավարտի մասնագիտական գործունեության ձևերը.

Բակլավվրը պատրաստվում է մասնագիտական գործունեության հետևյալ ձևերի համար՝

- նորմաստեղծ
- իրավակիրառ
- իրավապահպան
- փորձագիտական և խորհրդատվական

Շրջանավարտի մասնագիտական գործունեության խնդիրները.

«Իրավագիտություն» մասնագիտությամբ բակլավվրը մասնագիտական գործունեության ձևերին համապատասխան պետք է լուծի հետևյալ մասնագիտական խնդիրները.

- օրինականության, իրավակարգի, անձի, հասարակության և պետության անվտանգության պահպանում, հասարակական կարգի պահպանություն,
- իրավախախտումների նախազգուշացում, կանխարգելում, վերհանում, բացահայտում, քննություն,
- նորմաստեղծ գործունեություն,
- իրավապահպան գործունեություն,
- իրավակիրառ գործունեություն,
- պաշտոնական լիազորությունների շրջանակներում որոշումների հիմնավորում և ընդունում, ինչպես նաև իրավական նորմերի իրացման հետ կապված գործողությունների կատարում,
- փաստաթղթերի իրավական փորձաքննության իրականացում,
- իրավաբանական փաստաթղթերի կազմում,
- մասնակցություն նորմատիվ իրավական ակտերի մշակմանը,
- սեփականության մասնավոր, պետական , մունիցիպալ և այլ ձևերի պաշտպանություն,
- փորձագիտախորհրդատվական գործունեություն,
- իրավունքի հարցերով խորհրդատվություն;
- իրավական դաստիարակության իրականացում

17. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Ծրագրի շրջանավարտները կարող են արդյունավետ աշխատանք կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դատական իշխանության, ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում, իրավապահ մարմիններում, օմբուդսմենի գրասենյակում, իրավախորհրդատվական (փաստաբանական) գրասենյակներում, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, միջազգային կառույցներում ու կազմակերպություններում՝ զբաղեցնելով իրավաբանական բարձրագույն կրթություն պահանջող ցանկացած հաստիք:

Պետական պատվերի շրջանակներում ընդունվող դիմորդները բարեհաջող ավարտելու դեպքում անմիջապես նշանակվում են ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում միջին խմբի պաաշտոններում, որպես ոստիկանության ծառայողներ և նրանց հետ կնքվում է պայմանագիր 5 տարի ժամկետով:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ՀՀ ոստիկանության Կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայում:

18. Կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները /մարդկային, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, ֆինանսական/

Պրոֆեսորադասախոսական կազմը.

Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար ակադեմիայի ամբիոնները համալրված են անհրաժեշտ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով: Կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովի գիտամանկավարժական այնպիսի կադրերով, որոնք աչքի են ընկնում համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով հետևյալ ոլորտներում.

Մասնագիտական՝

- առարկայի խոր իմացություն, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,
- առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացություն,
- ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն,
- առարկայի շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին տեղեկացվածություն,
- գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն (<< Սահմանադրություն, << աշխատանքային օրենսգիրք, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» << օրենք, «Ոստիկանությունում ծառայության մասին» << օրենքը և այլն):

Անձնային՝

- տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու կարողություն,
- ուսումնական գործընթացում հնարավոր պրոբլեմային իրավիճակները հարթելու կարողություն,
- ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և էթիկայի նորմեր ձևավորելու կարողություն,
- ունենա հաղորդակցական բարձր մշակույթ,
- ուսումնառողների ներուժի գնահատում,
- լսարանին համոզելու կարողություն:

Մանկավարժական՝

- մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում,
- ուսանողների քննադատական մտածողության զարգացում,
- ուսումնառողների հետ իրենց ուժեղ և թույլ կողմերը վերլուծելու կարողություն,
- ուսուցման գործընթացում ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների ուսումնասիրություն և վերլուծություն անելու կարողություն,
- դասապրոցեսը սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն,
- սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու կարողություն,
- անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային գործունեություն իրականացնելիս,
- սովորողների ուսուցողական-ճանաչողական գործունեության խթանում,
- ուսումնառողների շրջանում սովորելու կայուն դրդապատճառների ձևավորում և խթանում:

Գիտահետազոտական՝

- ունեն գիտական աստիճան (գիտական կոչում կամ մասնագիտական ոլորտում աշխատանքային փորձ),
- հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամություն,
- գիտական հետազոտություններ իրականացնելու հմտություններ,
- մասնակցություն գիտաժողովներին,
- ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

Կազմակերպչական՝

- բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու կարողություն,
- ուսանողների ակտիվությունը խթանելու կարողություն,
- լաբորատոր աշխատանքներ, անհատական խորհրդատվություն, դիպլոմային և կուրսային աշխատանքներ, արտադրական պրակտիկա կազմակերպելու և ղեկավարելու կարողություն:

Հաղորդակցական՝

- խոսքի բարձր մշակույթի դրսևորում, ինչպես նաև խոսքի կատարելագործման ձգտում,
- միջանձնային հարաբերությունների պայմանական մեխանիզմների ձևավորում դասախոսի կողմից՝ հստակ մշակված խոսք, պահանջների և առաջադրանքների հստակ ձևակերպում, հիմնադրույթների հակիրճ ձևակերպում,
- համակարգչային գրագիտություն, համացանցից օգտվելու կարողություն,
- օտար լեզուների իմացություն,
- օտար լեզուներով մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմը բաղկացած է մասնագիտական և աշխատանքային փորձ ունեցող մասնագետներից, որոնցից շուրջ 53.1% ունեն գիտական աստիճան և/կամ կոչում:

Ուսումնամեթոդական ապահովվածությունը.

Ակադեմիայի գրադարանը ապահովված է մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար մասնագիտական առարկաների գծով անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականությամբ: Գրադարանային ֆոնդը համալրված է բոլոր դասընթացների համար մասնագիտական գրականությամբ, ուսումնամեթոդական փաթեթներով, դասընթացների առանձին բաղադրիչներին՝ դասախոսություններին, գործնական, անհատական, կուրսային աշխատանքներին վերաբերող մեթոդական ուղեցույցներով ու փաթեթներով:

Պարտադիր պահանջ է անհրաժեշտ ուսումնամեթոդական բազայի ստեղծումը, որի շրջանցման դեպքում հնարավոր չէ ապահովել բարձրորակ մասնագետի պատրաստումը: Ամբիոնները համալրված են դասախոսների աշխատանքային թղթապանակներով, որոնցում զետեղված են դասընթացի համար անհաժեշտ ամենակարևոր նյութերը:

Նյութատեխնիկական ապահովվածությունը

Կրթական ծրագրի ուսումնական գործընթացն իրականացնելու համար առկա են

- ընդհանուր հումանիտար առարկաների կաբինետներ,
- համակարգչային լսարաններ,
- ծառայության իրականացման մարտավարության լսարան,
- կրիմինալիստիկայի լսարան,
- իրավաբանական կլինիկա
- կրակային լսարան,
- հրաձգարան /մարտական, լազերային/
- սպորտային համալիր /մարզադահլիճ, մարզահրապարակ, ֆուտբոլի դաշտ, լողավազան/
- հանրակացարան

Լսարանները հագեցված են պրոեկտորներով, գործում է էլեկտրոնային գրադարանը:

Ակադեմիան, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

Ֆինանսական ապահովվածությունը

Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար առկա է կայուն ֆինանսական միջոցներ, որոնք առանձին տողով արտահայտված են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի տարեկան բյուջեում:

19. Շրջանավարտների ընդհանուր մշակութային և սոցիալ-անձնական կոմպետենցիաների զարգացումը ապահովող բուհական միջավայրը:
Բակալավրատի այս կրթական ծրագրի յուրացման արդյունքում բակալավրի շրջանավարտի մոտ ընդհանուր մշակութային և սոցիալ-անձնական կոմպետենցիաների զարգացումը իրականացվում է Կրթահամալիրի զարգացման ռազմավարությանը համապատասխան: ➤ Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքի գլխավոր խնդիրներն են՝

երիտասարդության սոցիալական ադապտացիայի բարելավումը, այնպիսի անձի ձևավորումը, ով կենսունակ է փոփոխվող սոցիալական և բնական միջավայրում, ունակ է ինքնորոշվել և ինքնիրացվել հասարակության մեջ՝ չխաթարելով դրա այլ անդամների իրավունքները և արժանապատվությունը,

- Սովորողների ինտելեկտուալ, հոգևոր, մշակութային և բարոյական զարգացման պահանջմունքների առավելագույնս բավարարումը:

20. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս:

1. ՀՀ Որակավորումների ազգային շրջանակ
2. Իրավագիտություն մասնագիտության ոլորտային շրջանակը:

21. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ:

Կրթական ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական սովորողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռնած ուսումնառության հնարավորություններից:

Հավելված 1

«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԿԾ /բակալավր/-ի ուսումնական պլան ըստ ուսումնական տարիների և կիսամյակների

Անվճար ուսուցում

Առաջին տարի					
Աշնանային կիսամյակ			Գարնանային կիսամյակ		
Ժամեր			Կրեդիտներ		
Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ			Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ		
Հայոց պատմության հիմնահարցեր	60	2	Հայոց լեզու և գրականություն	90	3
Տրամաբանություն	90	3	Օտար լեզու /անգլերեն/	120	4
Հայոց լեզու և գրականություն	60	2	Ռուսաց լեզու	120	4
Օտար լեզու /անգլերեն/	90	3	Փիլիսոփայություն	60	2
Ռուսաց լեզու	60	2	Տնտեսագիտություն	60	2
Տեղագրություն	60	2	Հայաստանի ոստիկանության պատմություն	60	2
Առաջին բուժօգնություն	90	3	Հայաստանի պետության և իրավունքի պատմություն	90	3
Արտ. երկրների պետության և իրավունքի պատմություն	90	3			
Մասնագիտական պարտադիր դասընթացներ			Մասնագիտական պարտադիր դասընթացներ		
Ոստիկանութ. Ինֆորմ.-տեխն. սպասարկում	60	2	Ոստիկանութ. Ինֆորմ.-տեխն. սպասարկում	60	2
Մասնագիտ. ներածություն և գաղնիության ռեժիմ	60	2	Պետության և իրավունքի տեսություն	120	4
ՀՀ իրավապահ մարմիններ	90	3	Ֆիզիկական պատրաստականություն	1	2
Պետության և իրավունքի տեսություն	90	3	Հոմեոպատիկ իրավունք	60	2
Ֆիզիկական պատրաստականություն	50	0	Հատուկ տակտիկական պատրաստականություն	90	3
			Կրակային պատրաստականություն	60	2
Հետազոտական կրթաբլոկ			Հետազոտական կրթաբլոկ		
Ուսումնական պրակտիկա	30	1			

Երկրորդ տարի					
Աշնանային կիսամյակ ժամեր Կրեդիտներ			Գարնանային կիսամյակ ժամեր Կրեդիտներ		
Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ			Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ		
Ռուսաց լեզու	90	3	Օտար լեզու /անգլերեն/	120	4
Օտար լեզու /անգլերեն/	60	2	Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի զործունեության մեջ	90	3
Փիլիսոփայություն	60	2	Հաղորդակցման հմտություններ	90	3
Տնտեսագիտություն	60	2			
Քաղաքագիտություն	90	3			
Մասնագիտական պարտադիր դասընթացներ			Մասնագիտական պարտադիր դասընթացներ		
Ոստիկանութ. ինֆորմ.-տեխն. սպասարկում	90	3	Ֆիզիկական պատրաստականություն	60	2
Ֆիզիկական պատրաստականություն	60	2	Հատուկ տակտիկական պատրաստականություն	30	1
Հատուկ տակտիկական պատրաստականություն	60	2	ՀՀ սահմանադրական իրավունք	60	2
Կրակային պատրաստականություն	30	1	ՀՀ վարչական իրավունք	90	3
Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք	90	3	ՀՀ քաղաքացիական իրավունք	90	3
ՀՀ սահմանադրական իրավունք	90	3	ՀՀ քրեական իրավունք	90	3
ՀՀ վարչական իրավունք	90	3	ՀՀ ֆինանսական իրավունք	60	3
ՀՀ քաղաքացիական իրավունք	90	3	ՀՀ մունիցիպալ իրավունք	60	2
ՀՀ քրեական իրավունք	120	4	ՀՀ աշխատանքային իրավունք	90	3
			Միջազգային իրավունք	60	2
			ՀՀ քրեական դատավարության իրավունք	60	2
Հետազոտական կրթաբլոկ			Հետազոտական կրթաբլոկ		
Ուսումնական պրակտիկա	30	1			

Երրորդ տարի					
Աշնանային կիսամյակ ժամեր Կրեդիտներ			Գարնանային կիսամյակ ժամեր Կրեդիտներ		
Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ			Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ		
Օտար լեզու /անգլերեն/	60	2	Քաղ պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմն.	90	3
Ոստիկանության ծառայողների էթիկա	90	3			
Մասնագիտական պարտադիր դասընթացներ			Մասնագիտական պարտադիր դասընթացներ		
Ֆիզիկական պատրաստականություն	60	2	Ֆիզիկական պատրաստականություն	60	2
Կրակային պատրաստականություն	30	1	Կրակային պատրաստականություն	30	1
ՀՀ քաղաքացիական իրավունք	90	3	ՀՀ քրեական իրավունք	120	4
ՀՀ քրեական իրավունք	120	4	ՀՀ քրեական դատավարության իրավունք	60	2
ՀՀ քրեական դատավարության իրավունք	60	2	Կրիմինալոգիա	90	3
ՀՀ վարչական դատավարության իրավունք	90	3	Ոստիկանության վարչական գործունեություն	90	3
ՀՀ բնապահպանական և հողային իրավունք	90	3	Կրիմինալիստիկա	120	4
Կրիմինալոգիա	60	2	Օպերատիվ-հետախուզական գործունեություն	90	3
Ոստիկանության վարչական գործունեություն	90	3	Հետաքննությունը ոստիկանությունում	60	3
Կրիմինալիստիկա	120	4	Դեպքի վայրի զննություն	60	2
Օպերատիվ-հետախուզական գործունեություն	150	5	ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունք	120	3
			Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն	60	2
Հետազոտական կրթաբլոկ			Հետազոտական կրթաբլոկ		
Կուրսային աշխատանք	60	2	Կուրսային աշխատանք	60	2
Ուսումնական պրակտիկա	60	2			

Չորրորդ տարի					
Աշնանային կիսամյակ ժամեր Կրեդիտներ			Գարնանային կիսամյակ ժամեր Կրեդիտներ		
Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ			Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ		
Ոստիկան. Ստորաբաժանումների կառավարումը	90	3			
Մասնագիտական պարտադիր դասընթացներ			Մասնագիտական պարտադիր դասընթացներ		
Ֆիզիկական պատրաստականություն	60	2	Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն	60	2
Կրակային պատրաստականություն	30	1	Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն	60	2
ՀՀ քրեական դատավարության իրավունք	90	3	ՀՀ քրեակատարողական իրավունք	90	3
Ոստիկանության վարչական գործունեություն	150	5	Մարդու իրավունքները և ոստիկանությունը	60	2
Կրիմինալիստիկա	120	4	Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա	90	3
